ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 28 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/1270-25առ 27 05 2025թ.

«Տրանզիտ պրո» ՍՊԸ
տնօրեն
Ա. Ասատրյանին

(Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-199/24-01/001 պայմանագրի միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ պարոն Ասատրյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության և «Տրանզիտ պրո» ՍՊ ընկերության միջև 2025 թվականի հունվարի 17-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-199/24-01/001 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), համաձայն որի «Տրանզիտ պրո» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել Պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները (Պայմանագրի 1.1 կետ):

Պայմանագրով սահմանված է.

- Գնորդն իրավունք ունի՝

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

- 2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Պայմանագրի անբաժան մաս կազմող Հավելված 2-ով ապրանքի մատակարարման ժամկետը սահմանված է՝ «պայմանագիրը կնքելուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում», սակայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրով ապրանքները չեն մատակարարվել:

Հաշվի առնելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ ընկերության կողմից միակողմանի լուծվում է «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Տրանզիտ պրո» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի հունվարի 17-ին կնքված №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-199/24-01/001

պայմանագիրը և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում «ՀԱԷԿ» ՓԲ ընկերության «Կոնվերս բանկ» ՓԲԸ 1930000199200100 հաշվեհամարին վճարել պայմանագրի (36 500 ՀՀ դրամ) և որակավորման (54 750 ՀՀ դրամ) ապահովումները:

Հարգանքով՝

ԳՏՏ - ԸՀԳՏ Ս. Մաթևոսյան

Կատ.
ԳԸԲ գլխավոր մասնագետ –
խմբի ղեկավար
Հռիփսիմե Ռամազյան
Հեռ. 010-20-04-91